

Կ-052-11.03.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ  
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒՆ Ի.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը սահմանում է պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) կարգավորման իրավական շրջանակը, ներառյալ՝ պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի (ՊՄԳ ծրագրեր) մշակմանը և իրականացմանն առնչվող կանոնները և ընթացակարգերը, կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը, կիրառելի չափանիշները և ՊՄԳ-ներին առնչվող այլ հարցեր:

**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

**1) արդյունքի վրա հիմնված վճարումներ՝** մասնավոր գործընկերոջ կողմից վաճառված ապրանքների և մատուցված ծառայությունների դիմաց հաճախորդների և (կամ) հանրային գործընկերոջ կողմից մասնավոր գործընկերոջը կատարվող վճարումներ,

**2) զուտ ներկա արժեք (NPV)**՝ գնահատվող ծրագրի իրականացման ընթացքում դրամական միջոցների ներհոսքի և արտահոսքի ներկա արժեքների տարբերություն, որի հաշվարկման ընթացքում օգտագործվող դիսկոնտավորման տոկոսադրույքը սահմանվում է ՊՄԳ ընթացակարգերով,

**3) իրավասու մարմին՝** Հայաստանի Հանրապետության կառավարություն, պետական կառավարման համակարգի մարմին, որը պետական կառավարման որոշակի ոլորտում մշակում և իրականացնում է քաղաքականություն, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմին,

**4) լիազոր մարմին՝** պետական ֆինանսների կառավարման բնագավառում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին,

5) **հայտատու`** մրցույթին մասնակցող իրավաբանական անձ կամ իրավաբանական անձանց կոնսորցիում,

6) **հանրային գործընկեր`** իրավասու մարմինը, որը ՊՄԳ պայմանագիր է կնքում մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի հետ,

7) **հանրային ենթակառուցվածք`** հանրային հետաքրքրություն կամ շահ ներկայացնող հիմնական միջոց (այդ թվում` շենքեր, կառուցվածքներ, սարքավորումներ) և (կամ) ոչ նյութական ակտիվ, որն օգտագործվում է հանրային ծառայությունների մատուցման նպատակով (կամ դրա առնչությամբ) և որի շահագործումը և (կամ) կառուցումը և (կամ) բարելավումը և (կամ) տեխնիկական սպասարկումն ապահովվում է մասնավոր գործընկերոջ կողմից` ՊՄԳ պայմանագրի համաձայն,

8) **հանրային ծառայություն`** հանրային շահերից բխող գործունեություն, որը սովորաբար իրականացվում է պետական մարմինների կողմից և (կամ) վերջիններիս անունից և (կամ) որի համար հիմնական պատասխանատվությունը կրում է պետական մարմինը, ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի իմաստով հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի ցանկացած ծառայություն կամ գործունեություն,

9) **հասանելիության վճարներ`** հանրային գործընկերոջ կողմից մասնավոր գործընկերոջը կատարվող պարբերական վճարումներ, որոնք հիմնված են ՊՄԳ պայմանագրով սահմանված կատարողական ցուցանիշներին (KPI) համապատասխանող հանրային ենթակառուցվածքի հասանելիության վրա,

10) **մասնավոր գործընկեր`** Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն ստեղծված և գործող մասնավոր իրավաբանական անձ, որի հետ հանրային գործընկերը կնքել է ՊՄԳ պայմանագիր կամ որը սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված կարգով փոխարինում է պայմանագրի կողմ հանդիսացող իրավաբանական անձին,

11) **պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանում կամ ՊՄԳ ստորաբաժանում`** Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված միավոր, որն իրականացնում է սույն օրենքով իրեն վերապահված լիազորությունները,

12) **ՊՄԳ`** պետություն-մասնավոր գործընկերություն,

13) **ՊՄԳ ծրագիր`** ծրագիր, որը ներառում է սույն օրենքի 4-րդ հոդվածում սահմանված չափանիշներին համապատասխանող, ՊՄԳ պայմանագրի վրա հիմնված համագործակցային փոխհարաբերություններ հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև,

**14)ՊՄԳ ընթացակարգեր`** ՊՄԳ ծրագրերի իրականացման նկատմամբ կիրառելի ընթացակարգեր և կանոններ, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ,

**15)ՊՄԳ պայմանագիր`** ՊՄԳ ծրագրի իրականացման նպատակով հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև սույն օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր, այդ թվում` կոնցեսիայի պայմանագիր,

**16) ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափ`** սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքված ՊՄԳ պայմանագրերի գծով Հայաստանի Հանրապետության պայմանական պարտավորությունների Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող ընդհանուր առավելագույն սահմանաչափ: Հայաստանի Հանրապետության պայմանական պարտավորությունների հաշվարկման և գնահատման մեթոդաբանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

**17) կոնսորցիում`** հայտատու իրավաբանական անձինք, որոնք մրցույթին մասնակցում են համատեղ գործունեության կարգով,

**18)վարկատու`** մասնավոր ֆինանսական կազմակերպություն, որը ՊՄԳ պայմանագրի առնչությամբ մասնավոր գործընկերոջը տրամադրում է վարկ,

**19)վերջնական սպառողներ`** ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ներառյալ` օգտագործողներ, գնորդներ, սպառողներ, որոնց մասնավոր գործընկերը ՊՄԳ պայմանագրի պայմանների համաձայն մատուցում է հանրային ծառայություններ կամ մատակարարում հասարակական հետաքրքրություն կամ շահ ներկայացնող ապրանքներ,

**20)տնտեսական շահութաբերության ներքին դրույք (EIRR)`** տնտեսական պլանավորման համար օգտագործվող չափիչ` պոտենցիալ ներդրումների հասարակության համար զուտ օգուտները գնահատելու համար: Տնտեսական շահութաբերության ներքին դրույքը զեղչման այն դրույքն է, որի դեպքում գնահատվող ծրագրի բոլոր տնտեսական օգուտների և ծախսերի զուտ ներկա արժեքը հավասարվում է զրոյի,

**21)ֆինանսական շահութաբերության ներքին դրույք (FIRR)`** կապիտալ բյուջետավորման համար օգտագործվող չափիչ` պոտենցիալ ներդրումների շահութաբերությունը գնահատելու համար: Ֆինանսական շահութաբերության ներքին դրույքը զեղչման այն դրույքն է, որի դեպքում գնահատվող ծրագրի ֆինանսական եկամուտների և ծախսերի զուտ դրամական հոսքերի զուտ ներկա արժեքը հավասարվում է զրոյի,

**22)ուղիղ պայմանագիր`** հանրային գործընկերոջ, մասնավոր գործընկերոջ և վարկատու(ներ)ի միջև կնքված պայմանագիր, որով սահմանվում են այն պայմանները,

որոնց հիման վրա վարկատուները կարող են իրավասու լինել իրականացնելու միջամտության իրավունքները,

**23) փողի դիմաց արժեք (value for money) կամ ՓՊԱ (VfM)**՝ համանման կամ համեմատելի հանրային ենթակառուցվածք կամ հանրային ծառայություն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր կարգով իրականացված լավագույն նմանատիպ ծրագրի արժեքի և գնահատվող ծրագրի իրականացման ծախսերի տարբերություն, որի հաշվարկման մեթոդաբանությունը կսահմանվի ՊՄԳ ընթացակարգերով,

**24) մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգեր**՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրերի նկատմամբ կիրառելի ընթացակարգեր,

**25) քաղաքականություն մշակող մարմին**՝ ՊՄԳ քաղաքականությունը մշակող պետական կառավարման համակարգի մարմին,

**26) ֆինսկալ առումով մատչելի (fiscally affordable)**՝ ՊՄԳ ծրագիրը չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ընդհանուր պայմանական պարտավորությունների առավելագույն սահմանաչափի գերազանցմանը՝ սահմանված լինելու դեպքում:

### **Հոդված 3. ՊՄԳ նպատակները**

1. ՊՄԳ-ի՝ որպես հանրային ենթակառուցվածքի և հանրային ծառայության ապահովման և կառավարման նպատակները ներառում են.

1) հանրային ենթակառուցվածքների կենսապարբերաշրջանի ընթացքում անհրաժեշտ ծախսերի կրճատում և դրանց կառուցման, բարելավման, շինարարության, շահագործման և պահպանման որակի բարելավում,

2) ակտիվի շահագործման ժամկետի ընթացքում դրա պատշաճ և ժամանակին պահպանման ապահովում,

3) հանրային ենթակառուցվածքների և ծառայությունների հասանելիության բարձրացում,

4) մասնավոր հատվածի փորձից, ռեսուրսներից, տեխնոլոգիաներից, արդյունավետությունից և նորարարության հետ կապված կարողություններից բխող օգուտների ստացում,

5) հանրային ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների ոլորտում հանրության նկատմամբ հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում,

6) Հայաստանի Հանրապետությունում ՊՄԳ ծրագրերի շրջանակներում ներգրավված հանրային ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական բազայի բարելավում,

7) անհրաժեշտության դեպքում նոր հանրային ենթակառուցվածքների համար ներդրումների ներգրավումը:

**Հոդված 4. ՊՄԳ ծրագրի չափանիշները**

1. ՊՄԳ ծրագիրը պետք է համապատասխանի հետևյալ բոլոր չափանիշներին.

1) ՊՄԳ պայմանագրի համաձայն ունենա առնվազն հինգ տարվա տևողություն, որը սկսվում է հաշվարկվել ՊՄԳ պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների (conditions precedent) իրականացման օրվանից սկսած,

2) միտված լինի հանրային ենթակառուցվածքի կառուցմանը և (կամ) բարելավմանը և (կամ) շահագործմանը, և (կամ) տեխնիկական սպասարկմանը,

3) ապահովի հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև ռիսկերի բաշխում՝ համաձայն ՊՄԳ ընթացակարգերի,

4) ապահովի Հայաստանի Հանրապետության համար տնտեսական շահութաբերություն, այսինքն՝ ունենա տնտեսական շահութաբերության ներքին դրույթ, որը կգերազանցի ՊՄԳ ընթացակարգերով սահմանված բազային դրույթը,

5) համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված՝ հանրային ներդրումների կառավարման քաղաքականությամբ սահմանված գերակայություններին,

6) լինի ֆիսկալ առումով մատչելի,

7) կիրառելիության դեպքում ունենա ՓղԱ, որը մեծ է գրոյից:

2. Հարկաթյուջետային ռիսկերի կառավարման ու ֆիսկալ կայունության ապահովման խնդիրներից ելնելով, լիազոր մարմինը սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացված վերլուծության արդյունքում կարող է տալ բացասական եզրակացություն, եթե հաշվարկելուց հետո կպարզվի, որ կնքվելիք պայմանագրի գծով պայմանական պարտավորությունների յուրաքանչյուր տարվա հանրագումարը, պայմանագրի իրականացման ժամկետի որևէ տարում, կհանգեցնի ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափի գերազանցման:

3. Որոշելու համար՝ արդյոք ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափը կգերազանցվի, հաշվի է առնվում հետևյալը՝

1) սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքված ՊՄԳ պայմանագրերի համաձայն իրականացվող ՊՄԳ ծրագրերը,

2) ՊՄԳ ծրագրերը, որոնց վերաբերյալ ընդունվել է մրցույթ անցկացնելու մասին որոշում, եթե տվյալ մրցույթն անցկացվելու է ընթացիկ ֆինանսական տարում:

**Հոդված 5. ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայության ոլորտները**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, որոնք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված՝ հանրային ներդրումների կառավարման քաղաքականությամբ սահմանված գերակայություններին:

ԳԼՈՒԽ II. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**Հոդված 6. Քաղաքականություն մշակող մարմինը`**

1. ՊՄԳ քաղաքականություն մշակող մարմինը`
  - 1) իրականացնում է ՊՄԳ քաղաքականության մշակման աշխատանքներ,
  - 2) իրականացնում է ՊՄԳ ծրագրերի խթանման, տարածման և մասնավոր գործընկերոջ ներգրավման գործառնություններ,
  - 3) ապահովում է ՊՄԳ ընթացակարգերի հետ կապված նորմատիվ իրավական ակտերի մշակումը,
  - 4) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 7. Լիազոր մարմինը`**

1. ՊՄԳ ոլորտում լիազոր մարմինը`
  - 1) իրականացնում է ՊՄԳ պայմանագրով սահմանված ֆինանսական պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն,
  - 2) ՊՄԳ ծրագրերը ենթարկում է ընթացիկ մշտադիտարկման` պայմանական պարտավորությունների տեսանկյունից,
  - 3) կատարում է սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված վերլուծություն,
  - 4) տրամադրում է սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը,
  - 5) իրականացնում է սույն օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

**Հոդված 8. ՊՄԳ ստորաբաժանումը`**

1. ՊՄԳ ստորաբաժանումը`
  - 1) ՊՄԳ ծրագրերի պատրաստման և իրականացման ոլորտում հանրային գործընկերներին և իրավասու մարմիններին ցուցաբերում է վարչական, մեթոդաբանական, փորձագիտական, խորհրդատվական, տեխնիկական և այլ տեսակի աջակցություն,

2) հանրային գործընկերների և իրավասու մարմինների համար կազմակերպում է ուսուցողական դասընթացներ և վերջիններիս կարողությունների զարգացմանն ուղղված այլ միջոցառումներ,

3) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

#### ***Հոդված 9. Իրավասու մարմինը***

1. Իրավասու մարմինը՝

1) վերհանում է ՊՄԳ ծրագրերը և պատրաստում ՊՄԳ ծրագրերի նախագծերը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում ՊՄԳ ծրագրի նախագծի պատրաստման, իրականացվող ՊՄԳ ծրագրի փոփոխության, ՊՄԳ պայմանագրի երկարաձգման վերաբերյալ որոշման նախագիծ,

3) մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգերին համապատասխան կազմակերպում է մրցույթ,

4) ՊՄԳ պայմանագիր է կնքում մրցույթում հաղթած մասնակցի հետ,

5) իրականացնում է ՊՄԳ ծրագրի մշտադիտարկումը և վերահսկողությունը:

#### ***Հոդված 10. ՊՄԳ ծրագրերի պատրաստումը***

1. ՊՄԳ ծրագրեր կարող են պատրաստվել իրավասու մարմնի կողմից ՊՄԳ ծրագրի նախագծի ձևաչափով:

2. Իրավասու մարմինը վերհանում է ՊՄԳ ծրագրերը և պատրաստում է ՊՄԳ ծրագրերի նախագծերը ՊՄԳ ընթացակարգերում նախատեսված չափանիշներին և սկզբունքներին համապատասխան:

3. ՊՄԳ ծրագրերի նախագիծը պետք է պարունակի ՊՄԳ ծրագրի՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չափանիշներին համապատասխանության հիմնավորումը:

4. ՊՄԳ ընթացակարգերով նախատեսված դեպքերում ՊՄԳ ծրագրի նախագծի պատրաստումը պետք է հաստատվի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

#### ***Հոդված 11. ՊՄԳ ծրագրերի նախագծի վերլուծությունը***

1. ՊՄԳ ծրագրի նախագիծը վերլուծության է ենթարկվում լիազոր մարմնի կողմից, որի արդյունքում լիազոր մարմինը եզրակացություն է տալիս ՊՄԳ ծրագրի՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ:

**Հողված 12. ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշման կայացումը**

1. ՊՄԳ ծրագրի նախագծի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշում:
2. ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշմամբ հաստատվում է ՊՄԳ պայմանագրի նախագիծը՝ սույն օրենքի 16-րդ հոդվածի պահանջների համաձայն, ինչպես նաև տվյալ ծրագրի իրականացմանը վերաբերող դրույթներ:

**Հողված 13. ՊՄԳ ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը**

1. ՊՄԳ ծրագրերի, դրանց պատրաստման և իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է [www.procurement.am](http://www.procurement.am) պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև ՊՄԳ ստորաբաժանման պաշտոնական ինտերնետային կայքում: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել նման հրապարակման հետ կապված պահանջները:
2. ՊՄԳ ծրագրերի, դրանց պատրաստման և իրականացման վերաբերյալ այնպիսի տեղեկատվությունը, որի հրապարակումը սահմանափակվում է օրենքներով, ենթակա չէ հրապարակման:

**ԳԼՈՒԽ III. ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Հողված 14. Մասնավոր գործընկերոջ ընտրության կարգը**

1. Իրավասու մարմինը մասնավոր գործընկերոջ ընտրությունը կատարում է մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգերին համապատասխան:

**Հողված 15. ՊՄԳ պայմանագրի կնքումը**

1. Իրավասու մարմինը մրցույթում հաղթող ճանաչված հայտատուի (կամ վերջինիս կողմից հիմնադրված իրավաբանական անձի) հետ կնքում է ՊՄԳ պայմանագիր՝ հանրային գործընկեր դառնալու նպատակով: Իրավասու մարմինն իրավունք ունի լիազորել պետական և (կամ) համայնքային կազմակերպություններին և (կամ) այլ իրավաբանական անձանց կազմակերպել մրցույթը և հանդես գալ որպես ՊՄԳ պայմանագրի երրորդ կողմ:
2. Եթե ՊՄԳ պայմանագիրը կնքվում է մրցույթում հաղթող ճանաչված հայտատուի կողմից հիմնադրված իրավաբանական անձի հետ, ապա այդպիսի իրավաբանական անձը պետք է բավարարի մրցույթի ընթացակարգերի պայմաններին:
3. Եթե հաղթող հայտատուն հանդիսանում է իրավաբանական անձանց կոնսորցիում, ապա հայտում ներառվում է նաև կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքը: Այդ կառուցվածքը չի կարող փոխվել ՊՄԳ պայմանագրի ստորագրման պահին: ՊՄԳ պայմանագրի ստորագրումից հետո կոնսորցիումի մասնակիցների



բաժնեմասնակցության կառուցվածքի ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

4. Հայաստանի Հանրապետությունը կամ ցանկացած պետական կառավարման համակարգի մարմին չի կարող ունենալ որևէ բաժնեմասնակցություն մասնավոր գործընկեր հանդիսացող կազմակերպությունում:

**ԳԼՈՒԽ IV. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ**

**Հոդված 16. ՊՄԳ պայմանագրերի հիմնական տեղեկությունները և պայմանները**

1. ՊՄԳ պայմանագիրը պետք է առնվազն ներառի հետևյալ տեղեկություններն ու պայմանները.

- 1) ՊՄԳ պայմանագրի կողմերը,
- 2) կողմերի իրավունքները և պարտավորությունները,
- 3) ՊՄԳ ծրագրի ռիսկերը և այդ ռիսկերի բաշխումը հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև,
- 4) ՊՄԳ պայմանագրի առարկան, այդ թվում՝ իրականացվող աշխատանքների շրջանակը, ՊՄԳ ծրագրի բաղադրիչները և բովանդակությունը և հանրային ենթակառուցվածքին ու հանրային ծառայություններին ներկայացվող այլ պահանջները,
- 5) ՊՄԳ պայմանագրի համաձայն փոխանցվող կամ կառուցվող և (կամ) բարելավվող և (կամ) զարգացվող և (կամ) շահագործվող և (կամ) սպասարկվող հանրային ենթակառուցվածքի և այլ գույքի նկարագրությունը, ներառյալ՝ տեխնիկական և տնտեսական բնութագրերը, դրանց նշանակությունը և օգտագործման ժամկետ(ներ)ը (առկայության դեպքում),
- 6) համապատասխան ենթակառուցվածքի կամ ՊՄԳ ծրագրի շրջանակներում ընդգրկված այլ գույքի նկատմամբ կողմերի իրավունքների (առկայության դեպքում) բաշխումը, ինչպես նաև դրանց փոխանցման կարգը,
- 7) ՊՄԳ ծրագրի իրականացման համար պահանջվող հողամասերի (անհրաժեշտության դեպքում) տրամադրման կարգը և պայմանները, ինչպես նաև դրանց վիճակի նկարագրությունը,
- 8) մասնավոր գործընկերոջ կողմից մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքների և (կամ) մատուցվող ծառայությունների գների (սակագների) սահմանման և փոփոխման կամ դրանց առնչվող պայմանները,
- 9) ՊՄԳ պայմանագրի գործողության ժամկետը և (կամ) դրա որոշման կարգը,
- 10) մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը տրամադրվող ապահովվածության տեսակները (առկայության դեպքում) և հիմնական պայմանները,

11) մասնավոր գործընկերոջը կատարվող՝ արդյունքի վրա հիմնված վճարումների, հասանելիության վճարների և (կամ) այլ վճարների (առկայության դեպքում) բնույթը,

12) ՊՄԳ պայմանագրում փոփոխություններ կատարելու կարգը,

13) մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը կատարվող բոլոր վճարումների (առկայության դեպքում) բնույթը,

14) ՊՄԳ պայմանագրի դադարեցման, այդ թվում՝ միակողմանի, հիմքերը, ընթացակարգերը և հանգամանքները, ներառյալ՝ վարկատուի միջամտության իրավունքները և պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դիմաց փոխհատուցման հաշվարկի կարգը:

15) մասնավոր գործընկերոջ կողմից կատարվող ներդրումների (առկայության դեպքում) նվազագույն ծավալը:

**Հոդված 17. ՊՄԳ պայմանագրերի պայմանների փոփոխությունը**

1. ՊՄԳ պայմանագրի պայմանները, այդ թվում՝ ՊՄԳ պայմանագրի ժամկետը, կարող են փոփոխվել, եթե նման փոփոխություն կատարելու հնարավորությունը հստակ և ուղղակի դրույթով նախատեսված է ՊՄԳ պայմանագրում: Այդ դրույթը պետք է սահմանի հնարավոր փոփոխությունների շրջանակը, բնույթը և կատարման կարգը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում այդ հնարավորությունը կարող է օգտագործվել:

2. ՊՄԳ պայմանագիրը պետք է ներառի սույն հոդվածի 1-ին մասի կիրառման հիմքով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ՊՄԳ պայմանագիրը միակողմանիորեն փոփոխելու, ինչպես նաև տվյալ հանրային ենթակառուցվածքին կամ հանրային ծառայությանը ուղղակիորեն վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության հետևանքով մասնավոր գործընկերոջ կրած վնասների հատուցման կարգը և պայմանները:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված փոփոխությունը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ

1) լիազոր մարմնի կողմից այդ փոփոխության վերաբերյալ տրված՝ սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը դրական է:

2) ՊՄԳ ծրագիրը շարունակում է համապատասխանել սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված չափանիշներին:

**Հողված 18. ՊՄԳ ծրագրերի իրականացման գործընթացում ներգրավված հանրային ենթակառուցվածքը և դրան առնչվող այլ գույքը**

1. ՊՄԳ պայմանագրի՝ ենթակառուցվածքի և դրան առնչվող այլ գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող կողմերն անհրաժեշտության դեպքում իրավասու են մյուս կողմին փոխանցել այդ իրավունքները, ներառյալ՝ հողամասերի և այլ անշարժ և շարժական գույքի նկատմամբ սեփականության և (կամ) օգտագործման իրավունքները, ինչպես նաև այլ գույքային իրավունքներ՝ ՊՄԳ պայմանագրի դրույթներին համապատասխան ՊՄԳ ծրագիրն իրականացնելու համար:

2. ՊՄԳ պայմանագիրը կարող է նախատեսել մասնավոր գործընկերոջ իրավունքը գույքի (գույքային իրավունքների) նկատմամբ իրավունքների փոխանցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ երրորդ կողմերին փոխանցել հանրային ենթակառուցվածքի և դրան առնչվող գույքի նկատմամբ իր բոլոր իրավունքները կամ դրանց մի մասն այնպիսի ժամկետով, որը չի գերազանցում ՊՄԳ պայմանագրով սահմանված՝ մասնավոր գործընկերոջ համապատասխան իրավունքի ժամկետը: Հանրային ենթակառուցվածքի և դրան առնչվող գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման ժամկետը չի կարող երկարաձգվել՝ անկախ ՊՄԳ պայմանագրի ժամկետի երկարաձգման իրավունքի առկայությունից:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված իրավունքների փոխանցումը վավեր է, միայն հանրային գործընկերոջ կողմից հաստատվելուց հետո:

4. Սույն հոդվածով նախատեսված իրավունքների փոխանցումը անվավեր է այդպիսի փոխանցման կատարման պահից, եթե այն հանգեցնում է ՊՄԳ պայմանագրի ժամկետի գերազանցմանը:

**Հողված 19. Հողամասերի տրամադրումը**

1. ՊՄԳ պայմանագրով նախատեսված դեպքերում հանրային գործընկերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է ապահովի ՊՄԳ ծրագրի իրականացման համար պահանջվող հողամասերի տրամադրումը մասնավոր գործընկերոջը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հողամասերը գտնվում են մասնավոր գործընկերոջ սեփականության կամ տիրապետման ներքո:

2. Հողամասերը կարող են տրամադրվել առանց այդ նպատակով լրացուցիչ մրցույթի անցկացման՝ առուվաճառքի, վարձակալության, հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագրի, սերվիտուտի կամ ցանկացած այլ գործարքի հիման վրա, որը թույլ կտա մասնավոր գործընկերոջը կատարել ՊՄԳ պայմանագրով նախատեսված իր պարտականությունները:

3. ՊՄԳ պայմանագիրը պետք է նախատեսի հանրային գործընկերոջ կողմից հողամասերը կամ վերջիններիս նկատմամբ անհրաժեշտ իրավունքները մասնավոր գործընկերոջը ՊՄԳ պայմանագրով սահմանված կարգով չտրամադրելու հետևանքները:

**Հոդված 20. ՊՄԳ պայմանագրի կողմերի պատասխանատվությունը**

1. Կողմերից որևէ մեկի կողմից պարտականությունների (ներառյալ՝ կատարողականի պահանջների, երաշխիքների և այլ պարտավորությունների) խախտումը կարող է հանգեցնել օրենքով կամ ՊՄԳ պայմանագրով սահմանված պատասխանատվության: ՊՄԳ պայմանագրում կարող են ներառվել պատասխանատվության օրենքով չարգելված ցանկացած միջոցներ:

**Հոդված 21. Միջամտության իրավունքները: ՊՄԳ պայմանագրի կողմերի փոխարինումը**

1. ՊՄԳ պայմանագրով կարող է սահմանվել, որ որոշակի հատուկ հանգամանքներում և ուղիղ պայմանագրի և (կամ) դրան առնչվող պայմանագրերի պայմանների համաձայն, հանրային գործընկերը կամ վարկատուն (վարկատուները) կարող են իրականացնել իրենց միջամտության իրավունքը: Այդ դեպքում համապատասխան հանրային ենթակառուցվածքի շահագործումը և (կամ) հանրային ծառայությունների մատուցումը՝ ենթակառուցվածքի արդյունավետ աշխատանքը և (կամ) ծառայությունների արդյունավետ մատուցումը և տվյալ ծրագրի շարունակական գործողությունն ապահովելու նպատակով կարող է ժամանակավորապես ստանձնել հանրային գործընկերը կամ վարկատուի (վարկատուների) կողմից նշանակված այլ իրավաբանական անձ (անձինք): Նման միջամտության ծախսերը կրում է ՊՄԳ պայմանագրով և (կամ) ուղիղ պայմանագրով սահմանված կողմը:

2. Այդ դեպքում մասնավոր գործընկերոջը կարող է ժամանակավորապես (ամբողջությամբ կամ մասամբ) փոխարինել հանրային գործընկերը կամ վարկատուի (վարկատուների) կողմից նշանակված իրավաբանական անձը (անձինք)՝ յուրաքանչյուր դեպքում առաջնորդվելով ՊՄԳ պայմանագրով և (կամ) ուղիղ պայմանագրով ավելի հստակ սահմանված կարգով և դրանց համապատասխան պայմանների համաձայն:

3. Եթե ուղիղ պայմանագրի հիման վրա մասնավոր գործընկերը ժամանակավորապես փոխարինվում է հանրային գործընկերոջով, ապա մասնավոր գործընկերոջ պարտքի փոխանցում Հայաստանի Հանրապետության կառավարությանը չի կարող իրականացվել:

4. Ցանկացած փոխարինող մասնավոր գործընկեր պետք է ՊՄԳ պայմանագրով նախատեսված կարգով համապատասխանի իր կողմից իրականացվելիք

աշխատանքների և (կամ) մատուցվելիք ծառայությունների հետ կապված որակավորման և այլ էական բոլոր պահանջներին (այդ թվում՝ ունենա Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համապատասխան լիցենզիա և (կամ) թույլտվություն), որոնց հիման վրա ՊՄԳ պայմանագիր էր կնքվել սկզբնական մասնավոր գործընկերոջ հետ:

5. Մասնավոր գործընկերոջ փոխարինման կարգը և դրա նկատմամբ կիրառելի պայմանները սահմանվում են համապատասխան ՊՄԳ պայմանագրով և (կամ) ուղիղ պայմանագրով: Մասնավոր գործընկերոջ մշտական փոխարինման դեպքում հանրային գործընկերը կազմակերպում է նոր մասնավոր գործընկերոջ ընտրության համար լրացուցիչ մրցույթ: Մասնավոր գործընկերոջ ժամանակավոր փոխարինման դեպքում լրացուցիչ մրցույթի անհրաժեշտություն չկա:

ԳԼՈՒԽ V. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### ***Հոդված 22. Մասնավոր գործընկերոջ իրավունքների երաշխիքները***

1. Հանրային գործընկերը և մասնավոր գործընկերը ՊՄԳ պայմանագրի հավասար կողմեր են:

2. Եթե մասնավոր գործընկերը վաճառում է ապրանքներ, իրականացնում է աշխատանքներ կամ մատուցում է ծառայություններ կարգավորվող գներով (սակագներով), և այդ գները (սակագները) կարգավորող մարմինները մասնավոր գործընկերոջ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար սահմանում են այնպիսի գներ (սակագներ), որոնք չեն ապահովում ՊՄԳ պայմանագրի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից կատարված տնտեսապես հիմնավորված ներդրումների հատուցումը, ապա հանրային գործընկերը կարող է ՊՄԳ պայմանագրի դրույթներին համապատասխան մասնավոր գործընկերոջը փոխհատուցել հատուցման համար չբավարարող գումարը: ՊՄԳ ընթացակարգերով կարող են սահմանվել փոխհատուցման վերաբերյալ մեթոդաբանական հանձնարարականներ, ուղեցույցներ, ինչպես նաև փոխհատուցման չափանիշներ, կանոններ կամ սահմանափակումներ:

3. Հանրային գործընկերը կարող է մասնավոր գործընկերոջը շնորհել ՊՄԳ պայմանագրով սահմանված գործունեությունն իրականացնելու բացառիկ իրավունքներ՝ ՊՄԳ ծրագրի տեխնիկական և ֆինանսական կենսունակությունն ապահովելու նպատակով, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

**Հողված 23. Երաշխիքներ վարկատուների համար**

1. Ուղիղ պայմանագրով վարկատուների համար կարող են նախատեսվել այնպիսի իրավունքներ և երաշխիքներ, որոնք պայմանագրի կողմերը նպատակահարմար կգտնեն:

2. Ուղիղ պայմանագրով կարող են մանրամասն սահմանվել սույն օրենքի 21-րդ հոդվածում նախատեսված՝ մասնավոր գործընկերոջ փոխարինման՝ վարկատուների իրավունքները, մասնավորապես այն որ հանրային գործընկերոջ կողմից առաջարկվող մասնավոր գործընկերոջ փոխարինումը չի կարող իրականացվել առանց վարկատուի հաստատման, կամ վարկատուների կողմից առաջարկվող այդպիսի փոխարինումը չի կարող իրականացվել առանց հանրային գործընկերոջ հաստատման:

3. Ուղիղ պայմանագիրը կարող է նախատեսել վարկատուների միջամտության իրավունքները, ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ վերջիններիս տեղեկատվության տրամադրման հետ կապված պայմանագրի կողմերի պարտավորությունները, ՊՄԳ պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում վարկատուների փոխհատուցման վերաբերյալ դրույթները և կողմերի միջև համաձայնեցված այլ դրույթներ:

4. Ուղիղ պայմանագրով կարող է սահմանվել դրանով նախատեսված որոշակի դեպքերում մասնավոր գործընկերոջ փոխարեն ուղղակիորեն վարկատուներին պայմանագրային վճարումներ կատարելու հանրային գործընկերոջ պարտականությունը:

5. Ուղիղ պայմանագիր կնքելու նպատակով հանրային գործընկերը մրցույթ չի կազմակերպում, եթե այն կնքում է մասնավոր գործընկերոջ և վարկատուի հետ:

6. ՊՄԳ պայմանագիրը կարող է նախատեսել մասնավոր գործընկերոջ պարտավորությունը վարկատուներին տրամադրել իր պարտավորությունների ցանկացած տեսակի ապահովում (կապված ՊՄԳ ծրագրում ներգրավված ակտիվների, ՊՄԳ պայմանագրով (և (կամ) դրան առնչվող փաստաթղթերով) նախատեսված իր իրավունքների և ՊՄԳ ծրագրի հետ կապված գործունեության հետ), որը չի արգելվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

ԳՆՈՒՄ VI. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**Հողված 24. ՊՄԳ ծրագրերի տվյալների բազան**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է բոլոր ՊՄԳ ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը:

2. Հանրային գործընկերը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ներկայացնում է իր կողմից կնքված յուրաքանչյուր ՊՄԳ պայմանագրի, վերջինիս բոլոր հավելվածների կամ լրացումների պատճենները՝ ՊՄԳ պայմանագիրը կամ վերջինիս համապատասխան լրացումը ստորագրելուց հետո քսան (20) օրվա ընթացքում:

3. ՊՄԳ ծրագրի տվյալների բազան պետք է հրապարակայնորեն հասանելի լինի, բացառությամբ այն տեղեկատվության, որի հրապարակումը սահմանափակվում է օրենքներով:

**Հոդված 25. ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը**

1. Հանրային գործընկերը պատրաստում և ՊՄԳ ստորաբաժանում է ներկայացնում ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն՝ մասնավոր գործընկերոջ կողմից ներկայացված եզրակացության հետ միասին:

2. ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. ՊՄԳ ստորաբաժանումը կարող է պահանջել լրացուցիչ պարզաբանումներ և բացատրություններ՝ ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ ցանկացած հաշվետվության մասով:

4. ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ յուրաքանչյուր հաշվետվություն պետք է հրապարակայնորեն հասանելի լինի:

**ԳԼՈՒԽ VII. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՆԱՆԻԶՄՆԵՐԸ**

**Հոդված 26. ՊՄԳ ծրագրերում պետական աջակցության տեսակները**

1. ՊՄԳ ծրագրի շրջանակներում մասնավոր գործընկերներին կարող են տրամադրվել պետական աջակցության հետևյալ տեսակները.

- 1) դրամաշնորհներ,
- 2) սուբսիդիաներ,
- 3) ՊՄԳ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ակտիվների հատկացումներ,
- 4) ՊՄԳ ծրագրի շրջանակներում նվազագույն հասույթի և (կամ) վերջնական սպառողների կամ գնորդների նվազագույն քանակի երաշխիքներ և (կամ) երաշխիքների և արտոնությունների այլ տեսակներ,
- 5) երաշխիքներ առ այն, որ հանրային գործընկերը սպառելու կամ օգտագործելու է ՊՄԳ ծրագրի իրականացման ընթացքում արտադրված ապրանքների, կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների որոշակի ծավալ կամ մասնաբաժին,

- 6) վարկեր և ֆինանսավորման կամ ներդրումների այլ ձևեր,
  - 7) ՊՍԳ ծրագրի հետ կապված որոշակի տեսակի ծախսերի և ռիսկերի փոխհատուցում (կամ դրանց համար ուղղակի պատասխանատվություն),
  - 8) բյուջետային երաշխիքներ,
  - 9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:
2. ՊՍԳ ծրագրի շրջանակներում մասնավոր գործընկերներն օգտվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային արտոնություններից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. ՊՍԳ ընթացակարգերով կարող են սահմանվել ՊՍԳ ծրագրերում պետական աջակցության տարբեր տեսակների վերաբերյալ մեթոդաբանական հանձնարարականներ և նման աջակցություն տրամադրելու վերաբերյալ ուղեցույցներ, ինչպես նաև որոշում է դրանց նկատմամբ կիրառելի բոլոր չափանիշները, կանոնները կամ սահմանափակումները:

***Հոդված 27. ՊՍԳ պայմանագրերի շրջանակներում կատարվող վճարումների տեսակները***

1. ՊՍԳ պայմանագիրը կարող է ներառել դրույթ, համաձայն որի բացի՝ վերջնական սպառողների կողմից կատարվող վճարումների և (կամ) արդյունքի վրա հիմնված վճարումների կամ դրանց փոխարեն հանրային գործընկերը մասնավոր գործընկերոջը վճարում է հասանելիության վճարներ և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ հատուցումներ՝ պայմանագրով սահմանված պայմաններով:
2. Մասնավոր գործընկերն իրավունք ունի ՊՍԳ պայմանագրի շրջանակներում իր գործունեությունից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանալ շահույթ և տնօրինել այդ շահույթը:
3. ՊՍԳ պայմանագրով կարող են նախատեսվել մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը կատարվող վճարումներ (մասնավոր գործընկերոջ վճարի կամ այլ ձևով), որոնք կարող են լինել պարբերական հիմունքով հաստատագրված գումարի կամ միանվագ գումարի, կամ մասնավոր գործընկերոջ կողմից ՊՍԳ պայմանագրի համաձայն իրականացվող գործունեությունից ստացվելիք ցանկացած հասույթի սահմանված մասնաբաժնի ձևով, կամ մասնավոր գործընկերոջը պատկանող գույքը հանրային գործընկերոջը սեփականության իրավունքով փոխանցելու ձևով, կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով: ՊՍԳ



պայմանագրով կարող է նախատեսվել նաև մասնավոր գործընկերոջ վճարի տարբեր ձևերի համադրություն:

4. ՊՍԳ պայմանագրով կարող է նախատեսվել սույն հոդվածի 1-3-րդ մասերում նշված վճարումների ձևերից ցանկացածի կամ բոլորի համադրությունը:

#### ԳԼՈՒԽ VIII.

#### ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

##### **Հոդված 28. Վեճերի լուծումը**

1. ՊՍԳ պայմանագրից, ուղիղ պայմանագրից կամ ՊՍԳ ծրագրի հետ կապված ցանկացած այլ պայմանագրից ծագող ցանկացած վեճ լուծվում է համապատասխան պայմանագրում և (կամ) Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում կողմերի միջև համաձայնեցված վեճերի լուծման կարգով:

2. ՊՍԳ պայմանագրի կողմերը կարող են ազատորեն ընտրել վեճերի լուծման մեխանիզմը, ներառյալ՝ հաշտարարությունը, իրավական պարտադիր ուժ ունեցող կամ չունեցող փորձագիտական գնահատումը կամ եզրակացությունը, ազգային կամ միջազգային առևտրային արբիտրաժը կամ ներդրումային արբիտրաժը, ինչպես նաև նման վեճերի լուծման ընթացակարգային կանոնները:

3. ՊՍԳ պայմանագրից, ուղիղ պայմանագրից կամ ՊՍԳ ծրագրին վերաբերող ցանկացած այլ պայմանագրից ծագող վեճերի մասով հանրային գործընկերը չի կարող ունենալ որևէ պետական կամ սուվերեն անձեռնմխելիություն:

**Հոդված 29. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

**Հոդված 30. Անցումային դրույթներ**

1. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հանրային և մասնավոր գործընկերների միջև կնքված ՊՄԳ պայմանագրերի և ՊՄԳ ծրագրերի մասով հայտարարված մրցույթների վրա:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետով, 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասով, 11-րդ հոդվածի 1-ին մասով, 12-րդ հոդվածի, 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասով, 25-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում:

*[Երկրորդ ընթերցում](#)*

*[Լրամշակված տարբերակ](#)*

[Կ-052-11.03.2019-ՏՀ-011/1](#)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ  
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ I.**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 31. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը սահմանում է պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) կարգավորման իրավական շրջանակը, ներառյալ՝ պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի (ՊՄԳ ծրագրեր) մշակմանը և իրականացմանն առնչվող կանոնները և ընթացակարգերը, կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը, կիրառելի չափանիշները և ՊՄԳ-ներին առնչվող այլ հարցեր:

**Հոդված 32. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

2. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

**15)արդյունքի վրա հիմնված վճարումներ`** մասնավոր գործընկերոջ կողմից վաճառված ապրանքների և մատուցված ծառայությունների դիմաց հաճախորդների և (կամ) հանրային գործընկերոջ կողմից մասնավոր գործընկերոջը կատարվող վճարումներ,

**16)զուտ ներկա արժեք (NPV)`** գնահատվող ծրագրի իրականացման ընթացքում դրամական միջոցների ներհոսքի և արտահոսքի ներկա արժեքների տարբերություն, որի հաշվարկման ընթացքում օգտագործվող դիսկոնտավորման տոկոսադրույքը սահմանվում է ՊՄԳ ընթացակարգերով,


**17)իրավասու մարմին`** Հայաստանի Հանրապետության կառավարություն, պետական կառավարման համակարգի մարմին, որը պետական կառավարման որոշակի ոլորտում մշակում և իրականացնում է քաղաքականություն, [Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմին](#),

**18)լիազոր մարմին`** պետական ֆինանսների կառավարման բնագավառում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին,

**19)հայտատու`** մրցույթին մասնակցող իրավաբանական անձ կամ իրավաբանական անձանց կոնսորցիում,

**20)հանրային գործընկեր`** իրավասու մարմինը, որը ՊՄԳ պայմանագիր է կնքում մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի հետ,

**21)հանրային ենթակառուցվածք`** հանրային հետաքրքրություն կամ շահ ներկայացնող հիմնական միջոց ([այդ թվում`](#) շենքեր, կառուցվածքներ, սարքավորումներ) և (կամ) ոչ նյութական ակտիվ, որն օգտագործվում է հանրային ծառայությունների մատուցման նպատակով (կամ դրա առնչությամբ) և որի շահագործումը և (կամ) կառուցումը և (կամ) բարելավումը և (կամ) տեխնիկական սպասարկումն ապահովվում է մասնավոր գործընկերոջ կողմից` ՊՄԳ պայմանագրի համաձայն,

**22)հանրային ծառայություն`** հանրային շահերից բխող գործունեություն, որը սովորաբար իրականացվում է պետական մարմինների կողմից և (կամ) վերջիններիս անունից և (կամ) որի համար հիմնական պատասխանատվությունը կրում է պետական մարմինը, ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին»  օրենքի իմաստով հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի ցանկացած ծառայություն կամ գործունեություն,

Deleted: Հայաստանի Հանրապետության

**23)հասանելիության վճարներ`** [հանրային գործընկերոջ կողմից](#) մասնավոր գործընկերոջը կատարվող պարբերական վճարումներ, որոնք հիմնված են ՊՄԳ պայմանագրով սահմանված կատարողական ցուցանիշներին (KPI) համապատասխանող հանրային ենթակառուցվածքի հասանելիության վրա,

**24)մասնավոր գործընկեր`** Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն ստեղծված և գործող մասնավոր իրավաբանական անձ, որի հետ հանրային գործընկերը կնքել է ՊՄԳ պայմանագիր կամ որը սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված կարգով փոխարինում է պայմանագրի կողմ հանդիսացող իրավաբանական անձին,

**25)պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանում կամ ՊՄԳ ստորաբաժանում`** Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված միավոր, որն իրականացնում է սույն օրենքով իրեն վերապահված լիազորությունները,

**26)ՊՄԳ`** պետություն-մասնավոր գործընկերություն,

**27)ՊՄԳ ծրագիր`** ծրագիր, որը ներառում է սույն օրենքի 4-րդ հոդվածում սահմանված չափանիշներին համապատասխանող, ՊՄԳ պայմանագրի վրա հիմնված համագործակցային փոխհարաբերություններ հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև,

**28)ՊՄԳ ընթացակարգեր`** ՊՄԳ ծրագրերի իրականացման նկատմամբ կիրառելի ընթացակարգեր և կանոններ, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ,

**15)ՊՄԳ պայմանագիր`** ՊՄԳ ծրագրի իրականացման նպատակով հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև սույն օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր, այդ թվում` կոնցեսիայի պայմանագիր,

**16) ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափ`** սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքված ՊՄԳ պայմանագրերի գծով Հայաստանի Հանրապետության պայմանական պարտավորությունների Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող ընդհանուր առավելագույն սահմանաչափ: Հայաստանի Հանրապետության պայմանական պարտավորությունների հաշվարկման և գնահատման մեթոդաբանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

**17) կոնսորցիում`** հայտատու իրավաբանական անձինք, որոնք մրցույթին մասնակցում են համատեղ գործունեության կարգով,

**18)վարկատու`** մասնավոր ֆինանսական կազմակերպություն, որը ՊՄԳ պայմանագրի առնչությամբ մասնավոր գործընկերոջը տրամադրում է վարկ,

**19)վերջնական սպառողներ`** ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ներառյալ` օգտագործողներ, գնորդներ, սպառողներ, որոնց մասնավոր գործընկերը ՊՄԳ պայմանագրի պայմանների համաձայն մատուցում է հանրային ծառայություններ կամ մատակարարում հասարակական հետաքրքրություն կամ շահ ներկայացնող ապրանքներ,

**20) ԹՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՒՈՒՔԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒՅՔ (EIRR)**՝ տնտեսական պլանավորման համար օգտագործվող չափիչ՝ պոտենցիալ ներդրումների հասարակության համար զուտ օգուտները գնահատելու համար: Տնտեսական շահութաբերության ներքին դրույքը զեղչման այն դրույքն է, որի դեպքում գնահատվող ծրագրի բոլոր տնտեսական օգուտների և ծախսերի զուտ ներկա արժեքը հավասարվում է զրոյի,

Deleted:

**21) Ֆինանսական շահութաբերության ներքին դրույք (FIRR)**՝ կապիտալ բյուջետավորման համար օգտագործվող չափիչ՝ պոտենցիալ ներդրումների շահութաբերությունը գնահատելու համար: Ֆինանսական շահութաբերության ներքին դրույքը զեղչման այն դրույքն է, որի դեպքում գնահատվող ծրագրի ֆինանսական եկամուտների և ծախսերի զուտ դրամական հոսքերի զուտ ներկա արժեքը հավասարվում է զրոյի,

Deleted:

**22) Ուղիղ պայմանագիր**՝ հանրային գործընկերոջ, մասնավոր գործընկերոջ և վարկատու(ներ)ի միջև կնքված պայմանագիր, որով սահմանվում են այն պայմանները, որոնց հիման վրա վարկատուները կարող են իրավասու լինել իրականացնելու միջամտության իրավունքները,

**23) Կողմի դիմաց արժեք (value for money) կամ ՓՊԱ (VfM)**՝ համանման կամ համեմատելի հանրային ենթակառուցվածք կամ հանրային ծառայություն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր կարգով իրականացված լավագույն նմանատիպ ծրագրի արժեքի և գնահատվող ծրագրի իրականացման ծախսերի տարբերություն, որի հաշվարկման մեթոդաբանությունը կսահմանվի ՊՍԳ ընթացակարգերով,

Deleted:

**24) մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգեր**՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված ՊՍԳ ծրագրերի նկատմամբ կիրառելի ընթացակարգեր,

Deleted: Հայաստանի Հանրապետության

**25) քաղաքականություն մշակող մարմին**՝ ՊՍԳ քաղաքականությունը մշակող պետական կառավարման համակարգի մարմին,

**26) ֆիսկալ առումով մատչելի (fiscally affordable)**՝ ՊՍԳ ծրագիրը չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ընդհանուր պայմանական պարտավորությունների առավելագույն սահմանաչափի գերազանցմանը՝ սահմանված լինելու դեպքում:

**Հոդված 33. ՊՍԳ նպատակները**

2. ՊՍԳ-ի՝ որպես հանրային ենթակառուցվածքի և հանրային ծառայության ապահովման և կառավարման նպատակները ներառում են.

8) հանրային ենթակառուցվածքների կենսապարբերաշրջանի ընթացքում անհրաժեշտ ծախսերի կրճատում և դրանց կառուցման, բարելավման, շինարարության, շահագործման և պահպանման որակի բարելավում,

9) ակտիվի շահագործման ժամկետի ընթացքում դրա պատշաճ և ժամանակին պահպանման ապահովում,

10) հանրային ենթակառուցվածքների և ծառայությունների հասանելիության բարձրացում,

11) մասնավոր հատվածի փորձից, ռեսուրսներից, տեխնոլոգիաներից, արդյունավետությունից և նորարարության հետ կապված կարողություններից բխող օգուտների ստացում,

12) հանրային ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների ոլորտում հանրության նկատմամբ հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում,

13) Հայաստանի Հանրապետությունում ՊՄԳ ծրագրերի շրջանակներում ներգրավված հանրային ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական բազայի բարելավում,

14) անհրաժեշտության դեպքում նոր հանրային ենթակառուցվածքների համար ներդրումների ներգրավումը:

#### **Հոդված 34. ՊՄԳ ծրագրի չափանիշները**

4. ՊՄԳ ծրագիրը պետք է համապատասխանի հետևյալ բոլոր չափանիշներին.

8) ՊՄԳ պայմանագրի համաձայն ունենա առնվազն հինգ տարվա տևողություն, որը սկսվում է հաշվարկվել ՊՄԳ պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների (conditions precedent) իրականացման օրվանից սկսած,

9) միտված լինի հանրային ենթակառուցվածքի կառուցմանը և (կամ) բարելավմանը և [\(կամ\) շահագործմանը, և \(կամ\) տեխնիկական սպասարկմանը.](#)

10) ապահովի հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև ռիսկերի բաշխում համաձայն ՊՄԳ ընթացակարգերի,

11) ապահովի Հայաստանի Հանրապետության համար տնտեսական շահութաբերություն, այսինքն՝ ունենա տնտեսական շահութաբերության ներքին դրույք, որը կգերազանցի ՊՄԳ ընթացակարգերով սահմանված բազային դրույքը,

12) համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված՝ հանրային ներդրումների կառավարման քաղաքականությամբ սահմանված գերակայություններին,

13) լինի ֆիսկալ առումով մատչելի,

14) կիրառելիության դեպքում ունենա ՓՊԱ, որը մեծ է գրոյից:

5. Հարկաբյուջետային ռիսկերի կառավարման ու ֆիսկալ կայունության ապահովման խնդիրներից ելնելով, լիազոր մարմինը սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացված վերլուծության արդյունքում կարող է տալ բացասական եզրակացություն, եթե հաշվարկելուց հետո կարգվի, որ կնքվելիք պայմանագրի գծով

Deleted:

պայմանական պարտավորությունների յուրաքանչյուր տարվա հանրագումարը, պայմանագրի իրականացման ժամկետի որևէ տարում, կհանգեցնի ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափի գերազանցման:

6. Որոշելու համար՝ արդյոք ՊՄԳ պարտավորությունների թույլատրելի սահմանաչափը կգերազանցվի, հաշվի է առնվում հետևյալը՝

1) սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքված ՊՄԳ պայմանագրերի համաձայն իրականացվող ՊՄԳ ծրագրերը,

2) ՊՄԳ ծրագրերը, որոնց վերաբերյալ ընդունվել է մրցույթ անցկացնելու մասին որոշում, եթե տվյալ մրցույթն անցկացվելու է ընթացիկ ֆինանսական տարում:

**Հոդված 35. ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայության ոլորտները**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ սահմանվում են ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, որոնք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված՝ հանրային ներդրումների կառավարման քաղաքականությամբ սահմանված գերակայությունների:

ԳՆՈՒԽ II. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**Հոդված 36. Քաղաքականություն մշակող մարմինը**

2. ՊՄԳ քաղաքականություն մշակող մարմինը՝
- 5) իրականացնում է ՊՄԳ քաղաքականության մշակման աշխատանքներ,
  - 6) իրականացնում է ՊՄԳ ծրագրերի խթանման, տարածման և մասնավոր գործընկերոջ ներգրավման գործառույթներ,
  - 7) ապահովում է ՊՄԳ ընթացակարգերի հետ կապված նորմատիվ իրավական ակտերի մշակումը,
  - 8) ,
  - 9) իրականացնում է սույն օրենքով՝ սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 37. Լիազոր մարմինը**

2. ՊՄԳ ոլորտում լիազոր մարմինը՝
- 6) իրականացնում է ՊՄԳ պայմանագրով սահմանված ֆինանսական պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն,

Deleted: 1. ՊՄԳ ծրագիր կարող է իրականացվել հետևյալ ոլորտներում. Պ՝ էներգետիկայի բնագավառ (էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարմաննակազամ ատակարարմաննակում մատ), Պ՝ ջրային ոլորտ (ջրի մատակարարման, մաքրման, բաշխման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) և ոռոգման համակարգեր), Պ՝ ավտոմոբիլային ճանապարհներ և ավտոմոբիլային ճանապարհների արհեստական կառույցներ, երկաթուղիներ, մետրոյի համակարգեր, ավտոկայաններ և ավտոբուսային տրանսպորտի հետ կապված այլ ենթակառուցվածքներ և ծառայություններ, այլ հանրային տրանսպորտի ծառայություններ, օդանավակայաններ, հսկիչ կշռման համակարգեր և այլ տրանսպորտային ենթակառուցվածքներ:

Deleted: 2

Deleted: կարող են

Deleted: էլ

Deleted: այլ

Deleted: ստեղծում և կառավարում է ՊՄԳ ծրագրերի տվյալների բազա,

Deleted: և ՊՄԳ ընթացակարգերով

- 7) ՊՄԳ ծրագրերը ենթարկում է ընթացիկ մշտադիտարկման՝ պայմանական պարտավորությունների տեսանկյունից,
- 8) կատարում է սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված վերլուծություն,
- 9) տրամադրում է սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը,
- 10) իրականացնում է սույն օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

**Հոդված 38. ՊՄԳ ստորաբաժանումը**

2. ՊՄԳ ստորաբաժանումը՝

- 4) ՊՄԳ ծրագրերի պատրաստման և իրականացման ոլորտում հանրային գործընկերներին և իրավասու մարմիններին ցուցաբերում է վարչական, մեթոդաբանական, փորձագիտական, խորհրդատվական, տեխնիկական և այլ տեսակի աջակցություն,
- 5) հանրային գործընկերների և իրավասու մարմինների համար կազմակերպում է ուսուցողական դասընթացներ և վերջիններիս կարողությունների զարգացմանն ուղղված այլ միջոցառումներ,
- 6) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Deleted: և ՊՄԳ ընթացակարգերով

**Հոդված 39. Իրավասու մարմինը**

**1. Իրավասու մարմինը՝**

- 6) Վերհանում է ՊՄԳ ծրագրերը և պատրաստում ՊՄԳ ծրագրերի նախագծերը,
- 7) Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում ՊՄԳ ծրագրի նախագծի պատրաստման, իրականացվող ՊՄԳ ծրագրի փոփոխության, ՊՄԳ պայմանագրի երկարաձգման վերաբերյալ որոշման նախագիծ,
- 8) մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգերին համապատասխան կազմակերպում է մրցույթ,
- 9) ՊՄԳ պայմանագիր է կնքում մրցույթում հաղթած մասնակցի հետ,
- 10) իրականացնում է ՊՄԳ ծրագրի մշտադիտարկումը և վերահսկողությունը:

**Հոդված 40. ՊՄԳ ծրագրերի պատրաստումը**

5. ՊՄԳ ծրագրեր կարող են պատրաստվել իրավասու մարմնի կողմից ՊՄԳ ծրագրի նախագծի ձևաչափով:
6. Իրավասու մարմինը վերհանում է ՊՄԳ ծրագրերը և պատրաստում է ՊՄԳ ծրագրերի նախագծերը ՊՄԳ ընթացակարգերում նախատեսված չափանիշներին և սկզբունքներին համապատասխան:



7. ՊՍԳ ծրագրերի նախագիծը պետք է պարունակի ՊՍԳ ծրագրի՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չափանիշներին համապատասխանության հիմնավորումը:

8. ՊՍԳ ընթացակարգերով նախատեսված դեպքերում ՊՍԳ ծրագրի նախագծի պատրաստումը պետք է հաստատվի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

**Հոդված 41. ՊՍԳ ծրագրերի նախագծի վերլուծությունը**

1. ՊՍԳ ծրագրի նախագիծը վերլուծության է ենթարկվում լիազոր մարմնի կողմից, որի արդյունքում լիազոր մարմինը եզրակացություն է տալիս ՊՍԳ ծրագրի՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ:

Deleted: 4-րդ հոդվածի

**Հոդված 42. ՊՍԳ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշման կայացումը**

3. ՊՍԳ ծրագրի նախագծի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է ՊՍԳ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշում:

4. ՊՍԳ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշմամբ հաստատվում է ՊՍԳ պայմանագրի նախագիծը՝ սույն օրենքի 16-րդ հոդվածի պահանջների համաձայն, ինչպես նաև տվյալ ծրագրի իրականացմանը վերաբերող դրույթներ:

**Հոդված 43. ՊՍԳ ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը**

1. ՊՍԳ ծրագրերի, դրանց պատրաստման և իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է [www.procurement.am](http://www.procurement.am) պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև ՊՍԳ ստորաբաժանման պաշտոնական ինտերնետային կայքում: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել նման հրապարակման հետ կապված պահանջները:

2. ՊՍԳ ծրագրերի, դրանց պատրաստման և իրականացման վերաբերյալ այնպիսի տեղեկատվությունը, որի հրապարակումը սահմանափակվում է օրենքներով, ենթակա չէ հրապարակման:

Deleted: և (կամ) հրապարակման պարտավորությունից ազատելու դեպքեր:

Deleted: և (կամ)

Deleted: ա

Deleted: հրապարակման պարտավորությունից ազատելու դեպքերայն տեղեկատվության,

Deleted: :

**ԳԼՈՒԽ III. ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Հոդված 44. Մասնավոր գործընկերոջ ընտրության կարգը**

2. Իրավասու մարմինը մասնավոր գործընկերոջ ընտրությունը կատարում է մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգերին համապատասխան:

**Հողված 45. ՊՄԳ պայմանագրի կնքումը**

5. Իրավասու մարմինը մրցություն հաղթող ճանաչված հայտատուի (կամ վերջինիս կողմից հիմնադրված իրավաբանական անձի) հետ կնքում է ՊՄԳ պայմանագիր՝ հանրային գործընկեր դառնալու նպատակով: Իրավասու մարմինն իրավունք ունի լիազորել պետական և (կամ) համայնքային կազմակերպություններին և (կամ) այլ իրավաբանական անձանց կազմակերպել մրցույթը և հանդես գալ որպես ՊՄԳ պայմանագրի երրորդ կողմ:

Deleted: մրցության փաստաթղթերով սահմանված պայմանների և ընթացակարգերի համաձայն

6. Եթե ՊՄԳ պայմանագիրը կնքվում է մրցություն հաղթող ճանաչված հայտատուի կողմից հիմնադրված իրավաբանական անձի հետ, ապա այդպիսի իրավաբանական անձը պետք է բավարարի մրցույթի ընթացակարգերի պայմաններին:

7. Եթե հաղթող հայտատուն հանդիսանում է իրավաբանական անձանց կոնսորցիում, ապա հայտում ներառվում է նաև կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքը: Այդ կառուցվածքը չի կարող փոխվել [ՊՄԳ պայմանագրի ստորագրման](#) պահին: [ՊՄԳ պայմանագրի ստորագրումից հետո կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքի ցանկացած փոփոխություն](#), [պետք է հաստատվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:](#)

Deleted: մասնավոր գործընկերոջ հիմնադրման

Deleted:

Deleted: հաստատվում

8. Հայաստանի Հանրապետությունը կամ ցանկացած պետական կառավարման համակարգի մարմին չի կարող ունենալ որևէ բաժնեմասնակցություն մասնավոր գործընկեր հանդիսացող կազմակերպությունում:

Deleted: այլ

**ԳԼՈՒԽ IV. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ**

**Հողված 46. ՊՄԳ պայմանագրերի հիմնական տեղեկությունները և պայմանները**

2. ՊՄԳ պայմանագիրը պետք է առնվազն ներառի հետևյալ տեղեկություններն ու պայմանները.

- 16) ՊՄԳ պայմանագրի կողմերը,
- 17) կողմերի իրավունքները և պարտավորությունները,
- 18) ՊՄԳ ծրագրի ռիսկերը և այդ ռիսկերի բաշխումը հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև,
- 19) ՊՄԳ պայմանագրի առարկան, այդ թվում՝ իրականացվող աշխատանքների շրջանակը, ՊՄԳ ծրագրի բաղադրիչները և բովանդակությունը և հանրային ենթակառուցվածքին ու հանրային ծառայություններին ներկայացվող այլ պահանջները,
- 20) ՊՄԳ պայմանագրի համաձայն փոխանցվող կամ կառուցվող և (կամ) բարելավվող և (կամ) զարգացվող և (կամ) շահագործվող և (կամ) սպասարկվող հանրային ենթակառուցվածքի և այլ գույքի նկարագրությունը, ներառյալ՝ տեխնիկական և

տնտեսական բնութագրերը, դրանց նշանակությունը և օգտագործման ժամկետ(ներ)ը (առկայության դեպքում),

21) համապատասխան ենթակառուցվածքի կամ ՊՄԳ ծրագրի շրջանակներում ընդգրկված այլ գույքի նկատմամբ կողմերի իրավունքների (առկայության դեպքում) բաշխումը, ինչպես նաև դրանց փոխանցման կարգը,

22) ՊՄԳ ծրագրի իրականացման համար պահանջվող հողամասերի (անհրաժեշտության դեպքում) տրամադրման կարգը և պայմանները, ինչպես նաև դրանց վիճակի նկարագրությունը,

23) մասնավոր գործընկերոջ կողմից մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքների և (կամ) մատուցվող ծառայությունների գների (սակագների) սահմանման և փոփոխման կամ դրանց առնչվող պայմանները,

24) ՊՄԳ պայմանագրի գործողության ժամկետը և (կամ) դրա որոշման կարգը,

25) մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը տրամադրվող ապահովվածության տեսակները (առկայության դեպքում) և հիմնական պայմանները,

26) մասնավոր գործընկերոջը կատարվող արդյունքի վրա հիմնված վճարումների, հասանելիության վճարների և (կամ) այլ վճարների (առկայության դեպքում) բնույթը,

27) ՊՄԳ պայմանագրում փոփոխություններ կատարելու կարգը,

28) մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը կատարվող բոլոր վճարումների (առկայության դեպքում) բնույթը,

29) ՊՄԳ պայմանագրի դադարեցման, այդ թվում՝ միակողմանի, հիմքերը, ընթացակարգերը և հանգամանքները, ներառյալ՝ վարկատուի միջամտության իրավունքները և պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դիմաց փոխհատուցման հաշվարկի կարգը:

Deleted:  
Deleted: (կամ դադարեցման վտանգի)  
Deleted: վճարները

30) մասնավոր գործընկերոջ կողմից կատարվող ներդրումների (առկայության դեպքում) նվազագույն ծավալը:

**Հոդված 47. ՊՄԳ պայմանագրերի պայմանների փոփոխությունը**

4. ՊՄԳ պայմանագրի պայմանները, այդ թվում՝ ՊՄԳ պայմանագրի ժամկետը, կարող են փոփոխվել, եթե նման փոփոխություն կատարելու հնարավորությունը հստակ և ուղղակի դրույթով նախատեսված է ՊՄԳ պայմանագրում: Վրդ դրույթը պետք է սահմանի հնարավոր փոփոխությունների շրջանակը, բնույթը և կատարման կարգը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում այդ հնարավորությունը կարող է օգտագործվել:

Deleted: Փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ  
Deleted: .  
Deleted: վ

Deleted: ,  
Deleted: նմանակը, բնույթը և կատարման կարգը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում այդ հնարավորությունը կարող է օգտա

Deleted: Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված փոփոխությունը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ լիազոր մարմնի կողմից այդ փոփոխության վերաբերյալ տրված սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը դրական է:

5. ՊՄԳ պայմանագիրը պետք է ներառի սույն հոդվածի 1-ին մասի կիրառման հիմքով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ՊՄԳ պայմանագիրը միակողմանիորեն փոփոխելու, ինչպես նաև տվյալ հանրային ենթակառուցվածքին կամ հանրային ծառայությանը ուղղակիորեն վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության հետևանքով մասնավոր գործընկերոջ կրած վնասների հատուցման կարգը և պայմանները:

6. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված փոփոխությունը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ

3) լիազոր մարմնի կողմից այդ փոփոխության վերաբերյալ տրված՝ սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը դրական է:

4) ՊՄԳ ծրագիրը շարունակում է համապատասխանել սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված չափանիշներին:

***Հոդված 48. ՊՄԳ ծրագրերի իրականացման գործընթացում ներգրավված հանրային ենթակառուցվածքը և դրան առնչվող այլ գույքը***

2. ՊՄԳ պայմանագրի՝ ենթակառուցվածքի և դրան առնչվող այլ գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող կողմերն անհրաժեշտության դեպքում իրավասու են մյուս կողմին փոխանցել այդ իրավունքները, ներառյալ՝ հողամասերի և այլ անշարժ և շարժական գույքի նկատմամբ սեփականության և (կամ) օգտագործման իրավունքները, ինչպես նաև այլ գույքային իրավունքներ՝ ՊՄԳ պայմանագրի դրույթներին համապատասխան ՊՄԳ ծրագիրն իրականացնելու համար:

2. ՊՄԳ պայմանագիրը կարող է նախատեսել մասնավոր գործընկերոջ իրավունքը գույքի (գույքային իրավունքների) նկատմամբ իրավունքների փոխանցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ երրորդ կողմերին փոխանցել հանրային ենթակառուցվածքի և դրան առնչվող գույքի նկատմամբ իր բոլոր իրավունքները կամ դրանց մի մասն այնպիսի ժամկետով, որը չի գերազանցում ՊՄԳ պայմանագրով սահմանված՝ մասնավոր գործընկերոջ համապատասխան իրավունքի ժամկետը: Հանրային ենթակառուցվածքի և դրան առնչվող գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման ժամկետը չի կարող երկարաձգվել՝ անկախ ՊՄԳ պայմանագրի ժամկետի երկարաձգման իրավունքի առկայությունից:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված իրավունքների փոխանցումը վավեր է, միայն հանրային գործընկերոջ կողմից հաստատվելուց հետո:

4. Սույն հոդվածով նախատեսված իրավունքների փոխանցումը անվավեր է այդպիսի փոխանցման կատարման պահից, եթե այն հանգեցնում է ՊՄԳ պայմանագրի ժամկետի գերազանցմանը:

Deleted:

**Հոդված 49. Հողամասերի տրամադրումը**

4. ՊՄԳ պայմանագրով նախատեսված դեպքերում հանրային գործընկերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է ապահովի ՊՄԳ ծրագրի իրականացման համար պահանջվող հողամասերի տրամադրումը մասնավոր գործընկերոջը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հողամասերը գտնվում են մասնավոր գործընկերոջ սեփականության կամ տիրապետման ներքո:

5. Հողամասերը կարող են տրամադրվել առանց այդ նպատակով լրացուցիչ մրցույթի անցկացման՝ առուվաճառքի, վարձակալության, հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագրի, սերվիտուտի կամ ցանկացած այլ գործարքի հիման վրա, որը թույլ կտա մասնավոր գործընկերոջը կատարել ՊՄԳ պայմանագրով նախատեսված իր պարտականությունները:

6. ՊՄԳ պայմանագիրը պետք է նախատեսի հանրային գործընկերոջ կողմից հողամասերը կամ վերջիններիս նկատմամբ անհրաժեշտ իրավունքները մասնավոր գործընկերոջը ՊՄԳ պայմանագրով սահմանված կարգով չտրամադրելու հետևանքները:

Deleted: ժամկետում

**Հոդված 50. ՊՄԳ պայմանագրի կողմերի պատասխանատվությունը**

6. Կողմերից որևէ մեկի կողմից պարտականությունների (ներառյալ՝ կատարողականի պահանջների, երաշխիքների և այլ պարտավորությունների) խախտումը կարող է հանգեցնել օրենքով կամ ՊՄԳ պայմանագրով սահմանված պատասխանատվության: ՊՄԳ պայմանագրում կարող են ներառվել պատասխանատվության՝ օրենքով չարգելված ցանկացած միջոցներ:

**Հոդված 51. Միջամտության իրավունքները: ՊՄԳ պայմանագրի կողմերի փոխարինումը**

1. ՊՄԳ պայմանագրով կարող է սահմանվել, որ որոշակի հատուկ հանգամանքներում և ուղիղ պայմանագրի և (կամ) դրան առնչվող պայմանագրերի պայմանների համաձայն, հանրային գործընկերը կամ վարկատուն (վարկատուները) կարող են իրականացնել իրենց միջամտության իրավունքը: Այդ դեպքում համապատասխան հանրային ենթակառուցվածքի շահագործումը և (կամ) հանրային ծառայությունների մատուցումը՝ ենթակառուցվածքի արդյունավետ աշխատանքը և (կամ) ծառայությունների արդյունավետ մատուցումը և տվյալ ծրագրի շարունակական գործողությունն

ապահովելու նպատակով կարող է ժամանակավորապես ստանձնել հանրային գործընկերը կամ վարկատուի (վարկատուների) կողմից նշանակված այլ իրավաբանական անձ (անձինք): Նման միջամտության ծախսերը կրում է ՊՄԳ պայմանագրով և (կամ) ուղիղ պայմանագրով սահմանված կողմը:

7. Այդ դեպքում մասնավոր գործընկերոջը կարող է ժամանակավորապես (ամբողջությամբ կամ մասամբ) փոխարինել հանրային գործընկերը կամ վարկատուի (վարկատուների) կողմից նշանակված իրավաբանական անձը (անձինք)՝ յուրաքանչյուր դեպքում առաջնորդվելով ՊՄԳ պայմանագրով և (կամ) ուղիղ պայմանագրով ավելի հստակ սահմանված կարգով և դրանց համապատասխան պայմանների համաձայն:

Deleted:

8. Եթե ուղիղ պայմանագրի հիման վրա մասնավոր գործընկերը ժամանակավորապես փոխարինվում է հանրային գործընկերոջով, ապա մասնավոր գործընկերոջ պարտքի փոխանցում Հայաստանի Հանրապետության կառավարությանը չի կարող իրականացվել:

9. Ցանկացած փոխարինող մասնավոր գործընկեր պետք է ՊՄԳ պայմանագրով նախատեսված կարգով համապատասխանի իր կողմից իրականացվելիք աշխատանքների և (կամ) մատուցվելիք ծառայությունների հետ կապված որակավորման և այլ էական բոլոր պահանջներին (այդ թվում՝ ունենա Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համապատասխան լիցենզիա և (կամ) թույլտվություն), որոնց հիման վրա ՊՄԳ պայմանագիր էր կնքվել սկզբնական մասնավոր գործընկերոջ հետ:

10. Մասնավոր գործընկերոջ փոխարինման կարգը և դրա նկատմամբ կիրառելի պայմանները սահմանվում են համապատասխան ՊՄԳ պայմանագրով և (կամ) ուղիղ պայմանագրով: Մասնավոր գործընկերոջ մշտական փոխարինման դեպքում հանրային գործընկերը կազմակերպում է նոր մասնավոր գործընկերոջ ընտրության համար լրացուցիչ մրցույթ: Մասնավոր գործընկերոջ ժամանակավոր փոխարինման դեպքում լրացուցիչ մրցույթի անհրաժեշտություն չկա:

**ԳԼՈՒԽ V. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**Հոդված 52. Մասնավոր գործընկերոջ իրավունքների երաշխիքները**

4. Հանրային գործընկերը և մասնավոր գործընկերը ՊՄԳ պայմանագրի հավասար կողմեր են:

5. Եթե մասնավոր գործընկերը վաճառում է ապրանքներ, իրականացնում է աշխատանքներ կամ մատուցում է ծառայություններ կարգավորվող գներով (սակագներով), և այդ գները (սակագները) կարգավորող մարմինները մասնավոր գործընկերոջ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար սահմանում են այնպիսի գներ (սակագներ), որոնք չեն ապահովում ՊՄԳ պայմանագրի

շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից կատարված տնտեսապես հիմնավորված ներդրումների հատուցումը, ապա հանրային գործընկերը կարող է ՊՄԳ պայմանագրի դրույթներին համապատասխան մասնավոր գործընկերոջը փոխհատուցել հատուցման համար չբավարարող գումարը: ՊՄԳ ընթացակարգերով կարող են սահմանվել փոխհատուցման վերաբերյալ մեթոդաբանական հանձնարարականներ, ուղեցույցներ, ինչպես նաև փոխհատուցման չափանիշներ, կանոններ կամ սահմանափակումներ:

6. Հանրային գործընկերը կարող է մասնավոր գործընկերոջը շնորհել ՊՄԳ պայմանագրով սահմանված գործունեությունն իրականացնելու բացառիկ իրավունքներ՝ ՊՄԳ ծրագրի տեխնիկական և ֆինանսական կենսունակությունն ապահովելու նպատակով եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Deleted: հայտատուին

**Հոդված 53. Երաշխիքներ վարկատուների համար**

7. Ուղիղ պայմանագրով վարկատուների համար կարող են նախատեսվել այնպիսի իրավունքներ և երաշխիքներ, որոնք պայմանագրի կողմերը նպատակահարմար կգտնեն:

8. Ուղիղ պայմանագրով կարող են մանրամասն սահմանվել սույն օրենքի 21-րդ հոդվածում նախատեսված՝ մասնավոր գործընկերոջ փոխարինման՝ վարկատուների իրավունքները, մասնավորապես այն որ հանրային գործընկերոջ կողմից առաջարկվող մասնավոր գործընկերոջ փոխարինումը չի կարող իրականացվել առանց վարկատուի հաստատման, կամ վարկատուների կողմից առաջարկվող այդպիսի փոխարինումը չի կարող իրականացվել առանց հանրային գործընկերոջ հաստատման:

9. Ուղիղ պայմանագիրը կարող է նախատեսել վարկատուների միջամտության իրավունքները, ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ վերջիններիս տեղեկատվության տրամադրման հետ կապված պայմանագրի կողմերի պարտավորությունները, ՊՄԳ պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում վարկատուների փոխհատուցման վերաբերյալ դրույթները և կողմերի միջև համաձայնեցված այլ դրույթներ:

10. Ուղիղ պայմանագրով կարող է սահմանվել դրանով նախատեսված որոշակի դեպքերում մասնավոր գործընկերոջ փոխարեն ուղղակիորեն վարկատուներին պայմանագրային վճարումներ կատարելու հանրային գործընկերոջ պարտականությունը:

11. Ուղիղ պայմանագիր կնքելու նպատակով հանրային գործընկերը մրցույթ չի կազմակերպում, եթե այն կնքում է մասնավոր գործընկերոջ և վարկատուի հետ:

12. ՊՄԳ պայմանագիրը կարող է նախատեսել մասնավոր գործընկերոջ պարտավորությունը վարկատուներին տրամադրել իր պարտավորությունների

ցանկացած տեսակի ապահովում (կապված ՊՄԳ ծրագրում ներգրավված ակտիվների, ՊՄԳ պայմանագրով (և (կամ) դրան առնչվող փաստաթղթերով) նախատեսված իր իրավունքների և ՊՄԳ ծրագրի հետ կապված գործունեության հետ), որը չի արգելվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**ԳԼՈՒԽ VI. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**Հոդված 54. ՊՄԳ ծրագրերի տվյալների բազան**

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է բոլոր ՊՄԳ ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը:
5. Հանրային գործընկերը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ներկայացնում է իր կողմից կնքված յուրաքանչյուր ՊՄԳ պայմանագրի, վերջինիս բոլոր հավելվածների կամ լրացումների պատճենները՝ ՊՄԳ պայմանագիրը կամ վերջինիս համապատասխան լրացումը ստորագրելուց հետո քսան (20) օրվա ընթացքում:
6. ՊՄԳ ծրագրի տվյալների բազան պետք է հրապարակայնորեն հասանելի լինի, բացառությամբ այն տեղեկատվության, որի հրապարակումը սահմանափակվում է օրենքներով:

Deleted: ՊՄԳ քաղաքականություն մշակող մարմինը ստեղծում և կառավարում է

Deleted: ն

Deleted: ու

Deleted: ու

Deleted: է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված

Deleted: ով

Deleted: ՊՄԳ քաղաքականություն մշակող մարմին

Deleted: և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

**Հոդված 55. ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը**

5. Հանրային գործընկերը պատրաստում և ՊՄԳ ստորաբաժանում է ներկայացնում ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն՝ մասնավոր գործընկերոջ կողմից ներկայացված եզրակացության հետ միասին:
6. ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
7. ՊՄԳ ստորաբաժանումը կարող է պահանջել լրացուցիչ պարզաբանումներ և բացատրություններ՝ ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ ցանկացած հաշվետվության մասով:
8. ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ յուրաքանչյուր հաշվետվություն պետք է հրապարակայնորեն հասանելի լինի:

**ԳԼՈՒԽ VII. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՆԱՆԻՉՄՆԵՐԸ**

**Հոդված 56. ՊՄԳ ծրագրերում պետական աջակցության տեսակները**

4. ՊՄԳ ծրագրի շրջանակներում մասնավոր գործընկերներին կարող են տրամադրվել պետական աջակցության հետևյալ տեսակները.



10) դրամաշնորհներ,

11) սուբսիդիաներ,

12) ՊՄԳ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ակտիվների հատկացումներ,

13) ՊՄԳ ծրագրի շրջանակներում նվազագույն հասույթի և (կամ) վերջնական սպառողների կամ գնորդների նվազագույն քանակի երաշխիքներ և (կամ) երաշխիքների և արտոնությունների այլ տեսակներ,

14) երաշխիքներ առ այն, որ հանրային գործընկերը սպառելու կամ օգտագործելու է ՊՄԳ ծրագրի իրականացման ընթացքում արտադրված ապրանքների, կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների որոշակի ծավալ կամ մասնաբաժին,

Deleted: ակարաթ

15) վարկեր և ֆինանսավորման կամ ներդրումների այլ ձևեր,

16) ՊՄԳ ծրագրի հետ կապված որոշակի տեսակի ծախսերի և ռիսկերի փոխհատուցում (կամ դրանց համար ուղղակի պատասխանատվություն),

17) բյուջետային երաշխիքներ,

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

5. ՊՄԳ ծրագրի շրջանակներում մասնավոր գործընկերներն օգտվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային արտոնություններից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՊՄԳ ընթացակարգերով կարող են սահմանվել ՊՄԳ ծրագրերում պետական աջակցության տարբեր տեսակների վերաբերյալ մեթոդաբանական հանձնարարականներ և նման աջակցություն տրամադրելու վերաբերյալ ուղեցույցներ, ինչպես նաև որոշում է դրանց նկատմամբ կիրառելի բոլոր չափանիշները, կանոնները կամ սահմանափակումները:

***Հոդված 57. ՊՄԳ պայմանագրերի շրջանակներում կատարվող վճարումների տեսակները***

5. ՊՄԳ պայմանագիրը կարող է ներառել դրույթ, համաձայն որի բացի՝ վերջնական սպառողների կողմից կատարվող վճարումների և (կամ) արդյունքի վրա հիմնված վճարումների կամ դրանց փոխարեն հանրային գործընկերը մասնավոր գործընկերոջը վճարում է հասանելիության վճարներ և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ հատուցումներ՝ պայմանագրով սահմանված պայմաններով:

6. Մասնավոր գործընկերն իրավունք ունի ՊՄԳ պայմանագրի շրջանակներում իր գործունեությունից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանալ շահույթ և տնօրինել այդ շահույթը:

Deleted: շարունակել

7. ՊՄԳ պայմանագրով կարող են նախատեսվել մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը կատարվող վճարումներ (մասնավոր գործընկերոջ վճարի կամ այլ ձևով), որոնք կարող են լինել պարբերական հիմունքով հաստատագրված գումարի կամ միանվագ գումարի, կամ մասնավոր գործընկերոջ կողմից ՊՄԳ պայմանագրի համաձայն իրականացվող գործունեությունից ստացվելիք ցանկացած հասույթի սահմանված մասնաբաժնի ձևով, կամ մասնավոր գործընկերոջը պատկանող գույքը հանրային գործընկերոջը սեփականության իրավունքով փոխանցելու ձևով, կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով: ՊՄԳ պայմանագրով կարող է նախատեսվել նաև մասնավոր գործընկերոջ վճարի տարբեր ձևերի համադրություն:

8. ՊՄԳ պայմանագրով կարող է նախատեսվել սույն հոդվածի 1-3-րդ մասերում նշված վճարումների ձևերից ցանկացածի կամ բոլորի համադրությունը:

Deleted: ¶

#### ԳԼՈՒԽ VIII.

#### ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

##### **Հոդված 58. Վեճերի լուծումը**

4. ՊՄԳ պայմանագրից, ուղիղ պայմանագրից կամ ՊՄԳ ծրագրի հետ կապված ցանկացած այլ պայմանագրից ծագող ցանկացած վեճ լուծվում է համապատասխան պայմանագրում և (կամ) Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում կողմերի միջև համաձայնեցված վեճերի լուծման կարգով:

5. ՊՄԳ պայմանագրի կողմերը կարող են ազատորեն ընտրել վեճերի լուծման մեխանիզմը, ներառյալ՝ հաշտարարությունը, իրավական պարտադիր ուժ ունեցող կամ չունեցող փորձագիտական գնահատումը կամ եզրակացությունը, ազգային կամ միջազգային առևտրային արբիտրաժը կամ ներդրումային արբիտրաժը, ինչպես նաև նման վեճերի լուծման ընթացակարգային կանոնները:

6. ՊՄԳ պայմանագրից, ուղիղ պայմանագրից կամ ՊՄԳ ծրագրին վերաբերող ցանկացած այլ պայմանագրից ծագող վեճերի մասով հանրային գործընկերը չի կարող ունենալ որևէ պետական կամ սուվերեն անձեռնմխելիություն:

**Հոդված 59. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

**Հոդված 60. Անցումային դրույթներ**

1. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հանրային և մասնավոր գործընկերների միջև կնքված ՊՍԳ պայմանագրերի և ՊՍԳ ծրագրերի մասով հայտարարված մրցույթների վրա:
2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետով, 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասով, 11-րդ հոդվածի 1-ին մասով, 12-րդ հոդվածի, 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասով, 25-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի հունիսի 3-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետություն-մասնավոր գործընկերության մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ավտոմոբիլային ձանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Կ-052-11.03.2019-SՀ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5

**«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի նախագիծ**

ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Համարակալել Նախագծի 1-ին հոդվածի միակ մասը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 24-րդ կետեր	<p>1. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «իրավասու մարմին» հասկացությունը վերջից լրացնել «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմին» բառերով:</p> <p>7. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ «հանրային ենթակառուցվածք» հասկացության մեջ, «շենքեր» բառից առաջ լրացնել «այդ թվում » բառերով:</p> <p>8. Հանել նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի «Հայաստանի Հանրապետության» բառերը՝</p>	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

	<p>հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:</p> <p>9. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ «հասանելիության վճարներ» հասկացության մեջ «հասանելիության վճարներ» բառերից հետո լրացնել «հանրային գործընկերոջ կողմից» բառերով:</p> <p>10. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը՝ «մասնավոր գործընկեր» հասկացության մեջ «Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը» բառերով, նույն հոդվածի նույն կետում «ՊՄԳ պայմանագիր» բառերից հետո լրացնել «կամ որը սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված կարգով փոխարինում է պայմանագրի կողմ հանդիսացող իրավաբանական անձին» բառերով:</p> <p>11. Հանել Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:</p>		
<p>Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ և 3-րդ մասի 1-2-րդ կետերի</p>	<p>1. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «բարելավմանը և» բառերից հետո լրացնել «(կամ)» բառը, «շահագործմանը» բառից հետո՝ «և (կամ) տեխնիկական սպասարկմանը» բառերը:</p> <p>2. Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-2-րդ կետերի համարները տեքստից բաժանել փակագծով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>Նախագծի 5-րդ հոդված</p>	<p>1. Հանել Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը:</p> <p>2. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, որոնք պետք է</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>

	համապատասխան են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված հանրային ներդրումների կառավարման քաղաքականությամբ սահմանված գերակայություններին:»:		
Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետեր	1. Հանել Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը: 2. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հանել «և ՊՄԳ ընթացակարգերով» բառերը՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները և հաշվի առնելով սույն նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «ֆինանսական պարտավորությունների» բառերից հետո լրացնել «կատարման նկատմամբ» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Հանել նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «և ՊՄԳ ընթացակարգերով» բառերը՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները և հաշվի առնելով սույն նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածը լրացնել 1-ին մասով. «1. Իրավասու մարմինը» բառերով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 11-րդ հոդված	1. Համարակալել Նախագծի 11-րդ հոդվածի միակ մասը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

	2. Նախագծի 11-րդ հոդվածից հանել 2-րդ անգամ օգտագործված «4-րդ հոդվածի» բառերը:	փոփոխություն:	
Նախագծի 13-րդ հոդված	1. Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «պահանջներ և (կամ) հրապարակման պարտավորությունից ազատելու դեպքեր» բառերը փոխարինել «պահանջները» բառով: 2. հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով. «2. ՊՄԳ ծրագրերի, դրանց պատրաստման և իրականացման վերաբերյալ այնպիսի տեղեկատվությունը, որի հրապարակումը սահմանափակվում է օրենքներով, ենթակա չէ հրապարակման:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասեր	1.Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասից հանել «մրցութային փաստաթղթերով սահմանված պայմանների և ընթացակարգերի համաձայն» բառերը: 2. Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3.Եթե հաղթող հայտատուն հանդիսանում է իրավաբանական անձանց կոնսորցիում, ապա հայտում ներառվում է նաև կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքը: Այդ կառուցվածքը չի կարող փոխվել ՊՄԳ պայմանագրի ստորագրման պահին: ՊՄԳ պայմանագրի ստորագրումից հետո կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքի ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:»: 3. Նախագծի 15-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «այլ» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 16-րդ հոդվածի վերնագիր և	1.Նախագծի 16-րդ հոդվածի վերնագրում «հիմնական» բառից հետո լրացնել «տեղեկությունները և» բառերը՝ նկատի ունենալով, որ 16-րդ հոդվածի 1-ին մասում խոսքը գնում է	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:

<p>1-ին մասի 14-րդ կետ</p>	<p>տեղեկությունների ու պայմանների մասին: Սա բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից: 2. Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «14) ՊՄԳ պայմանագրի դադարեցման, այդ թվում՝ միակողմանի, հիմքերը, ընթացակարգերը և հանգամանքները, ներառյալ՝ վարկատուի միջամտության իրավունքները և պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դիմաց փոխհատուցման հաշվարկի կարգը:»:</p>	<p>փոփոխություն:</p>	
<p>Նախագծի 17-րդ հոդված</p>	<p>Նախագծի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. ՊՄԳ պայմանագրի պայմանները, այդ թվում՝ ՊՄԳ պայմանագրի ժամկետը, կարող են փոփոխվել, եթե նման փոփոխություն կատարելու հնարավորությունը հստակ և ուղղակի դրույթով նախատեսված է ՊՄԳ պայմանագրում: Այդ դրույթը պետք է սահմանի հնարավոր փոփոխությունների շրջանակը, բնույթը և կատարման կարգը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում այդ հնարավորությունը կարող է օգտագործվել:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>

7. ՊՄԳ պայմանագիրը պետք է ներառի սույն հոդվածի 1-ին մասի կիրառման հիմքով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ՊՄԳ պայմանագիրը միակողմանիորեն փոփոխելու, ինչպես նաև տվյալ հանրային ենթակառուցվածքին կամ հանրապետության ծառայությանը:



	<p>իրականացվել միայն այն դեպքում, երբ 5) լիազոր մարմնի կողմից այդ փոփոխության վերաբերյալ տրված՝ սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը դրական է:</p> <p>6) ՊՄԳ ծրագիրը շարունակում է համապատասխանել սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված չափանիշներին:»:</p>		
<p>Նախագծի 18-րդ հոդված</p>	<p>Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել և հոդվածը լրացնել նոր 3-րդ և 4-րդ մասերով.</p> <p>«2. ՊՄԳ պայմանագիրը կարող է նախատեսել մասնավոր գործընկերոջ իրավունքը գույքի (գույքային իրավունքների) նկատմամբ իրավունքների փոխանցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ երրորդ կողմերին փոխանցել հանրային ենթակառուցվածքի և դրան առնչվող գույքի նկատմամբ իր բոլոր իրավունքները կամ դրանց մի մասն այնպիսի ժամկետով, որը չի գերազանցում ՊՄԳ պայմանագրով սահմանված՝ մասնավոր գործընկերոջ համապատասխան իրավունքի ժամկետը: Հանրային ենթակառուցվածքի և դրան առնչվող գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման ժամկետը չի կարող երկարաձգվել՝ անկախ ՊՄԳ պայմանագրի ժամկետի երկարաձգման իրավունքի առկայությունից:</p> <p>3. Սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված իրավունքների փոխանցումը վավեր է միայն հանրային գործընկերոջ կողմից հաստատվելուց հետո:</p> <p>4. Սույն հոդվածով նախատեսված իրավունքների փոխանցումը անվավեր է այդպիսի փոխանցման կատարման պահից, եթե այն հանգեցնում է ՊՄԳ պայմանագրի ժամկետի գերազանցմանը:»:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>

Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր	<p>1.19-րդ հոդվածի 1-ին մասում «հանրային գործընկերը» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը:</p> <p>2. 19-րդ հոդվածի 3-րդ մասում «ժամկետում» բառը փոխարինել «կարգով» բառով:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>
Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մաս	<p>22-րդ հոդվածի 3-րդ մասում «հայտատուին» բառը փոխարինել «մասնավոր գործընկերոջը» բառերով և «նպատակով» բառից հետո լրացնել «, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը»:» բառերը:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>
Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասեր	<p>1. Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է բոլոր ՊՄԳ ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը:»:</p> <p>2. Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասում «ՊՄԳ քաղաքականություն մշակող մարմնին» բառերը փոխարինել «սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով» բառերով:</p> <p>3. Նախագծի 24-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» բառերը:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>
Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	<p>Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «մատակարարված» բառը փոխարինել «մատուցված» բառով:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>
Նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ մաս	<p>27-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «շարունակել» բառը:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>

	Նախագծի 29-րդ հոդված	Համարակալել Նախագծի 29-րդ հոդվածի միակ մասը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 9-րդ գլուխ	1. Նախագծի 9-րդ գլխի վերնագիրը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Գլուխ IX. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» 2. Նախագծի 9-րդ գլուխը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր հոդվածով. <b>«Հոդված 30. Անցումային դրույթներ</b> 1. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հանրային և մասնավոր գործընկերների միջև կնքված ՊՄԳ պայմանագրերի և ՊՄԳ ծրագրերի մասով հայտարարված մրցույթների վրա: 2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետով, 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասով, 11-րդ հոդվածի 1-ին մասով, 12-րդ հոդվածի, 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասով, 25-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
<b>«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.</b>				
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	1-ին հոդվածի երկրորդ «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ	2-8-րդ հոդվածներում «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան	Ընդունվել է:

	հողվածներ		փոփոխություն:	
	Նախագծի 2-րդ հողված	2-րդ հողվածում «481-րդ» բառերը փոխարինել «48.1-ին» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի դրույթները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 6-րդ և 7-րդ հողվածներ	6-7-րդ հողվածներում «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 6-րդ հողված	6-րդ հողվածի «ենթակետով» բառը փոխարինել «կետով» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 8-րդ հողված	8-րդ հողվածի 1-ին մասի «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
<b>«Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.</b>				
ՀՀ կառավարություն	Վերնագրում	նախագծի վերնագրի «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Վերնագրում	նախագծի վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերը փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

	նախագծի 1-ին հոդված	Հանել նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
<b>«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.</b>				
ՀՀ կառավարություն	Վերնագրում	վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածով լրացվող ենթակետը տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան	Ընդունվել է:

			փոփոխություն:	
<b>«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.</b>				
ՀՀ կառավարություն	Վերնագրում	վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածում կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	3-րդ հոդվածում կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
<b>«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու</b>				

<b>մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.</b>				
ՀՀ կառավարություն	Վերնագրում	նախագծի վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածի 1-2-րդ մասերից «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածի 1-2-րդ մասերում (3-րդ հոդվածի 2-րդ մասում «ՀՀ» հապավումը) կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
<b>«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.</b>				
ՀՀ կառավարություն	Վերնագրում	Նախագծի վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերը փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ	Ընդունվել է: Նախագծում կատարվել է	Ընդունվել է:

		իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	համապատասխան փոփոխություն:	
	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածում կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածից հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածից հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: